# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 11-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Վայք համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 30-ի թիվ 11-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
3.Վայք համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 18-ի թիվ 3-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ուսման վարձերի և ծնողական վճարների ամսական դրույքաչափեր սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
4.Վայք համայնքի «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ-ից «Գյուղատնտեսություն» ՀՈԱԿ-ին տրանսպորտային միջոցներ հանձնելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
5.Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 7-րդ փողոցում փակուղի ավելացնելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
6.Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող 0.10 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
7.Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող 2.78010292 հա, 18.46852236 հա և 9.54588971 հա մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
8.Վայք համայնքի սեփականություն համարվող, Զառիթափ բնակավայրում գտնվող 2.78010292հա, 18.46852236հա և 9.54588971հա մակերեսով հողամասերը առանց մրցույթի «Վարդանի Զարթոնք» ՍՊԸ- ին վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
9.Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 12-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հաշվի առնելով «ՆՅՈՒ ՊԼԱՍ» ՓԲԸ- ի տնօրեն Արմեն Հարությունյանի դիմումը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 30-ի ««ՆՅՈՒ ՊԼԱՍ» փակ բաժնետիրական ընկերությանը սերվիտուտով հողատարածք տրամադրելու մասին» թիվ 11-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

Վայքի համայնքապետ՝

Մխիթար Մաթևոսյանին

<<ՆՅՈՒ ՊԼԱՍՏ>> ՓԲԸ

Տնօրեն՝ Արմեն Հարությունյանից

Հեռ.՝ 093 808580

ԴԻՄՈՒՄ

/Տրամադրված սերվիտուտը դադարեցնելու մասին/

Հարգելի պարոն՝ Մաթևոսյան

Վայք համայնքի ավագանու կողմից՝ 30.01.2018 թվականին կայացվել է՝ <<ՆՅՈՒ ՊԼԱՍՏ>> ՓԲ Ընկերությանը Ջերմուկի խճ. 55 հասցեում գտնվող շենք-շինությունների և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված հողատարածքի հարակից տարածքից 650,0 քմ հողատարածքը անժամկետ սերվիտուտով տրամադրելու մասին թիվ 11 որոշումը:

Ներկայումս վերը նշված սերվիտուտից օգտվելու անհրաժեշտություն առկա չէ, ուստի խնդրում ենք ուժը կորցրած ճանաչել՝ Վայք համայնքի ավագանու՝ 30.01.2018 թվականի թիվ 11 որոշումը:

Կցվում է

Վայք համայնքի ավագանու՝ 30.01.2018 թվականի թիվ 11 որոշման պատճեն

Հարգանքով՝

<<ՆՅՈՒ ՊԼԱՍՏ>> ՓԲԸ

Տնօրեն՝ Արմեն Հարությունյան 26.01.2023թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 13-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի համայնքային ոչ առևտրային նշված կազմակերպություններում սահմանել ուսման վարձեր և ծնողական վճարներ՝ ըստ կից ներկայացվող հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 18-ի «Վայքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ծնողական վճարների 2016 թվականի ամսական դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 3-Ա որոշումը:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -9　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝　　　　ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Համայնքի ավագանու
14.02.2023թ. թիվ 13-Ա որոշման

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

## 1 <<ՎԱՅՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-Ի ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Մասնագիտության անվանումը | Դրույքաչափը ՀՀ դրամով |
|---|---|---|
| 1. | Դաշնամուրի դասարան | 3000/երեք հազար/ |
| 2. | Վոկալի դասարան | 3000/երեք հազար/ |
| 3. | Ջութակի դասարան | 3000/երեք հազար/ |
| 4. | Կերպարվեստի բաժին | 3000/երեք հազար/ |
| 5. | Դուդուկի, շվիի դասարան | 3000/երեք հազար/ |
| 6. | Քանոնի դասարան | 3000/երեք հազար/ |
| 7. | Կլառնետի դասարան | 3000/երեք հազար/ |

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Հ/հ | | Դրույքաչափը ՀՀ դրամով |
|---|---|---|
| 1. | Միջազգային և հանրապետական մրցույթներում դափնեկրի համար | անվճար |
| 2. | Երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար | անվճար |
| 3. | Հաշմանդամության կարգ ունեցող երեխայի համար | անվճար |
| 4, | ՀՀ Զինված ուժերում, Արցախյան պատերազմներում զոհված զինծառայողների երեխաներ, պատերազմին մասնակից երկրապահ կամավորականների միության անդամների երեխաներ | անվճար |
| 5, | Նույն ընտանիքից 3 և ավելի երեխաների համար | 1-ը՝ անվճար |
| 6, | Միաժամանակ 2 խմբում ընդգրկված երեխայի համար | 1-ը՝ 50 % |
| 7, | Նույն ընտանիքից 2 երեխաների համար | 1-ը՝ 50 % |

2. <<ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ
   Ամսական ծնողական վճար-4000/չորս հազար/ ՀՀդրամ
3. <<ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ
   Ամսական ծնողական վճար-4000/չորս հազար/ ՀՀ դրամ
4. «ԶԱՌԻԹԱՓԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ
   Ամսական ծնողական վճար-2400/երկու հազար չորս հարյուր/ ՀՀդրամ
5. <<ՎԱՅՔԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀՈԱԿ
   Ամսական ծնողական վճար-1000/մեկ հազար/ ՀՀդրամ

| Հ/հ | | Դրույքաչափը ՀՀ դրամով |
|---|---|---|
| 1 | Երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար | անվճար |
| 2 | Հաշմանդամության կարգ ունեցող երեխայի համար | անվճար |
| 3 | ՀՀ Զինված ուժերում, Արցախյան պատերազմներում զոհված զինծառայողների երեխաներ, պատերազմին մասնակից երկրապահ կամավորականների միության անդամների երեխաներ | անվճար |
| 4 | Նպաստառու ընտանիքների երեխաներ | 50 % |
| 5 | Միաժամանակ 2 խմբում ընդգրկված երեխայի համար | 50 % |
| | | |

Աշխատակազմի քարտուղար Ա. Ն. Ղազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 14-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՅՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-ԻՑ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի հաշվեկշռում գտնվող, համայնքի կողմից շահագործման հանձնված թվով 9/ինը/ տրանսպորտային միջոցները անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Գյուղատնտեսություն» ՀՈԱԿ-ին համաձայն հավելվածի:

2. Լուծել Վայքի համայնքապետարանի և«Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի միջև կնքված պայմանագիրը, և նոր պայմանագիր կնքել Վայքի համայնքապետարանի և համապատասխանաբար «Վայքի բարեկարգում» և «Գյուղատնտեսություն» ՀՈԱԿ-ների միջև:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել «Վայքի բարեկարգում» և «Գյուղատնտեսություն» ՀՈԱԿ-ների տնօրեններին և հաշվապահներին:

4. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 15-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑՈՒՄ ՓԱԿՈՒՂԻ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով և ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 7-րդ փողոցում ավելացնել փակուղի և անվանել Վայք համայնք, գյուղ Զառիթափ, 7-րդ փողոց, 4-րդ փակուղի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 16-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.10 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի բնակիչ Արսեն Գևորգյանին պատկանող, 0,10 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (հողատեսքը՝ բնակելի կառուցապատում) նպատակային նշանակության հողերի:

2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

**Ձև N 5**

Վայք (համայնքի անվանումը)
Մ.Մաթևոսյան (համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)
Ա.Գևորգյան (դիմողի անունը, ազգանունը (անվանումը)
գ.Զառիթափ 20-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 4 (բնակության վայրը (գտնվելու վայրը)

# Դ Ի Մ Ո Ւ Մ

## ՀՈՂԱՄԱՍԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ փոփոխել ի.Վայք Զառիթափ բնակավայրում

*հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը (հողամասի ծածկագիրը)*

1) հողամասի մակերեսը՝ 0.10 հա, փոփոխվող հողամասի մակերեսը՝ 0.10 հա

2) գլխավոր հատակագծով նախատեսված նպատակային և գործառնական նշանակությունները՝ բնակավայրերի

3) առաջարկվող նպատակային և գործառնական նշանակությունները՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման

4) հողամասի նշանակությունը փոփոխելու նպատակը (նախատեսվող օբյեկտի բնույթը, ծավալը, հզորությունը)՝ բնակելի տան սպասարկման համար

6) բիզնեսի նպատակով նախատեսվող օբյեկտների մասին տեղեկատվություն (կատարվելիք ներդրումների չափի և ստեղծվելիք աշխատատեղերի վերաբերյալ)՝ չի նախատեսվում

7) հողամասի սեփականության (օգտագործման (վարձակալության), իրավունքի վկայականի պատճենը՝ ՀԲՍՀ-ի սեփականաշնորհման 24.03.1992թ թիվ 12 որոշումից քաղված 1 թերթ.

8) ինքնակամ շինություններ (առկայության դեպքում)՝ առկա չէ

Դիմող ________ (ստորագրությունը) ________ (անունը, ազգանունը)

01.10. 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 17-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2.78010292 ՀԱ, 18.46852236ՀԱ ԵՎ 9.54588971 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 2/փ-20 եզրակացությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նաշանակության (հողատեսքերը՝ արոտավայր) 10-022-0226-0019 կադաստրային ծածկագրով 2.8014 հա մակերեսով հողամասից 2.78010292 հա մակերեսով հողամասը, 10-022-0226-0016 կադաստրային ծածկագրով 30.3837 հա մակերեսով հողամասից 18.46852236 հա մակերեսով հողամասը և 10-022-0225-0035 կադաստրային ծածկագրով 11.4032 հա մակերեսով հողամասից 9.54588971 հա մակերեսով հողամասը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողերի:

2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՔԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

——————— N ———————

ՀՀ Վայոց ձորի մարզ
Վայք համայնքի ղեկավար
պարոն Մխիթար ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

2023 թվականի հունվարի 9-ի N 14 և
2023 թվականի հունվարի 13-ի N 22 գրություններ

Հարգելի պարոն Մաթևոսյան

Ձեզ ենք տրամադրում ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 10-022-0226-0019 կադաստրային ծածկագրով 2.8014 հա մակերեսով հողամասից 2.78010292 հա մակերեսով հողամասը, 10-022-0226-0016 կադաստրային ծածկագրով 30.3837 հա մակերեսով հողամասից 18.46852236 հա մակերեսով հողամասը և 10-022-0225-0035 կադաստրային ծածկագրով 11.4032 հա մակերեսներով հողամասից 9.54588971 հա մակերեսով հողամասը՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կարծիքների ամփոփ տեղեկանքն ու դրական եզրակացությունը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Առդիր՝ 2 ֆայլ:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN NUNE 5714640420

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725
կատարող Աստղինե Հակոբյան

Ձև N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 20

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Զառիթափ համայնքի գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Զառիթափ բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 10-022-0226-0019 կադաստրային ծածկագրով 2.8014 հա մակերեսով հողամասից 2.78010292 հա, 10-022-0226-0016 կադաստրային ծածկագրով 30.3837 հա մակերեսով հողամասից 18.46852236 հա և 10-022-0225-0035 կադաստրային ծածկագրով 11.4032 հա մակերեսներով հողամասից 9.54588971 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրեր | 10-022-0226-0019 կադաստրային ծածկագրով 2.8014 հա մակերեսով հողամասից 2.78010292 հա, 10-022-0226-0016 կադաստրային ծածկագրով 30.3837 հա մակերեսով հողամասից 18.46852236 հա և 10-022-0225-0035 կադաստրային ծածկագրով 11.4032 հա մակերեսներով հողամասից 9.54588971 հա մակերեսներով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողեր |

2. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Զառիթափ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

*Հանձնաժողովի նախագահ՝* Ա. Ղուկասյան

*Հանձնաժողովի քարտուղար՝* Հ. Դավթյան

Երևան, «24» «հունվարի» 2023թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 18-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ, ՁԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2.78010292 ՀԱ ,18.46852236 ՀԱ ԵՎ 9.54588971 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ «ՎԱՐԴԱՆԻ ՁԱՐԹՈՆՔ» ՍՊԸ- ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով, 75-րդ հըոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 44-րդ կետի ը/ ենթակետը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության /ներկայիս՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության/ կողմից 27.09.2012թ. «Վարդանի Ձարթոնքը» ՍՊ ընկերությանը տրամադրվել է թիվ ՇԱԹ-Վ-29/239 օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, թիվ ԼՎ- 239 լեռնահատկացման ակտ և վերջինիս հետ կնքվել է ընդերքօգտագործման պայմանագիր, ինչը նշանակում է, որ «Վարդանի Ձարթոնքը» ՍՊ ընկերությունը ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունք, Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Ձառիթափ բնակավայրում գտնվող թիվ 10-022-0226-0019 կադաստրային ծածկագրով 2.8014 հա մակերեսով հողամասից առանձնացնել 2.78010292 հա, թիվ 10-022-0226-0016 կադաստրային ծածկագրով 30.3837 հա մակերեսով հողամասից առանձնացնել 18.46852236 հա, թիվ 10-022-0225-0035 կադաստրային ծածկագրով 11.4032 հա մակերեսով հողամասից առանձնացնել 9.54588971 հա և նշված հողամասերը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել «Վարդանի Ձարդոնք» ՍՊ ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքի ժամկետին համապատասխան՝ ոչ

ավել քան 25 /քսանհինգ/ տարի ժամկետով, և վճարի չափը 1 քմ-ի համար սահմանել տարեկան 35 /երեսունհինգ/ ՀՀ դրամ:

2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 19-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի մարտի 17–ին, ժամը՝ 15:30–ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ